վրայ: Նրանք գրկախառնոեցան, կրկին եւ կրկին անգամ համբուրոեցան: Յետոյ նա մօտեցաւ մեզ: Նախ համբուրոեցաւ Ջալլադի հետ եւ ապա ինձ հետ: Ես մինչեւ այսօր չեմ մոռացել այն խրատը, որ վերջին անգամ տոեց ինձ. «Հետեւի՛ր, Ֆարհադ, այդ մարդու խորհուրդներին, նա ուղիղ ճանապարհի վրայ կդնէ քեզ»... Նա ցոյց տոեց Ասլանի վրայ:

Խորին, ջերմեռանդ զգացմունքներով բաժանոեցանք մենք, մեզ հետ տանելով խիստ անմոռաց յիշատակներ այդ անձնուրաց, անձնազոհ երիտասարդի գործունէութիւնից, որ իրան նոիրել էր գիւղացու կրթութեանը, գիւղացու բարօրութեանը:

Ընթերցող, դու արդէն վաղուց պէտք է գուշակած լինես, թէ ո՞վ էր այդ երիտասարդը:

Դա Կարօն էր:

ԻԶ. ԱՂԹԱՄԱՐԱՅ ՎԱՆՔԸ

Աղթամար կղզին գտնւում է Վանայ ծովակի հարաւ-արեւելեան ափերի մօտ, մէկ ժամի ջրային ճանապարհով միայն հեռու է ցամաքից: Ամենահին ժամանակներում այս կղզին Ռշտունեաց հզօր նախարարութեան գլխաւոր ամրոցներից մէկն էր: Ծովը եւ կղզու բարձր, ապառաժոտ դիրքը անմատչելի էին կացուցանում նրան թշնամու յարձակմունքներից: Ռշտունեաց նահապետներից առաջինն եղաւ Ռաշամ, որ նրա վրայ ամրութիւններ հիմնեց: Իսկ յետոյ, Տիգրան մեծի օրերում, Բարզափրան Ռշտունին աւելի ամրացրեց Աղթամարը նոր շինութիւններով եւ, բնակեցնելով այնտեղ Պաղեստինից բերած հրէայ գերիների մի մասը, կղզուն աւանի ձեւ տոեց: Թէոդորոս Ռշտունին, եօթերորդ դարու հերոսը, ընտրեց Աղթամարը իր համար պաշտպանութեան մի ամուր դիրք: Այստեղ էր պատսպարւում նա, երբ պատահում էր նրան խոյս տալ թշնամիներից:

Գագիկը, Արծրունեաց առաջին թագաւորը, աւելի քան Ռշտունի նախարարները, հասկացաւ Աղթամարայ ռազմագիտական բարձր նշանակութիւնը ի հարկէ, իր ժամանակի պայմանների համեմատ: Իր հոյակապ շինութիւններով նա Աղթամարին նոր կեանք տոեց: Նախ, կղզին փոքր գտնելով իր ընդարձակ նպատակների համար, մտածեց լայնացնել նրան: Կղզու չորեքկողմից շրջանակաձեւ կտրեց ծովի մի մասը եւ կամեցաւ նրան ցամաք դարձնել: Այդ մեծագործ ամբարտակի հիմքը դրեց ծովի յատակի վրայ եւ սկսեցնրայ ահագին խորութիւնը լցնել մեծամեծ քարերով: Երկրի բոլոր արհեստաւորները եւ բանոորների ստոար բազմութիւն, զբաղոած էին այդ հսկայ